

ՆՈՐԸՆԾԱՅ ԱՐԺ. Տ. ԳՐԻԳՈՐ ՔՀՆՅ. ԶԱՔԱՐԵԱՆ
ԿԸ ՄԱՏՈՒՑԱՆԷ ԻՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԸ

Ինչպէս իր ժամանակին հաղորդած էինք, Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէր-
տէրեան Հոկտեմբեր 13ին, 2009 Փալմ Սփրինկլի Սուրբ Մարկարիթ Եպիսկոպոսական Եկեղեցւոյ
մէջ քահանայ ձեռնադրեց եւ օծեց Բրշ. Մարթին Սրկ. Զաքարեանը եւ վինք անուանակոչեց Տ.
Գրիգոր Քահանայ:

Տէր Հայրը «քառասունք»ի իր աղօթքի եւ պատրաստութեան շրջանը անցուց Սանթա Պար-
պարայի մէջ: Առաջնորդ Սրբապան Հօր կողմէ նշանակուած Լոս Անճելլոսի շրջանի Թեմիս
հոգեւորականները վինք այցելելով ծիսակատարութիւններ կատարելու անհրաժշտ ուղղութիւնը
եւ պատրաստութիւնը ցուցաբերեցին իրեն:

Արժ. Տ. Գրիգոր Քհնյ. Զաքարեան Կիրակի, Նոյեմբեր 8ին իր Անդրանիկ Սուրբ Պատարագը
մատոյց Անապատի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ, Ռէնչօ Սիրաժ, որուն Հոգեւոր Հովիւն է եւ
տուաւ իր առաջին քարոզը: Առաջնորդ Սրբապան Հայրը ներկայացնելով, Հոգշ. Տ. Պարտեւ Ծ. Վրդ.
Երէցեան վինք պաշտօնապէս ներկայացուց հաւատացեալներուն, շնորհաւորեց վինք եւ Սրբապան
Հօր օրհնութիւններն ու սիրալիր ողջոյնները փոխանցեց իրեն՝ քաջառողջութեան եւ յարատեւ
յաջողութեան լաւագոյն մաղթանքներով: